ՅԱՒԵԼՈՒԱԾ Թ

(ՎԻՊԱՍԱՆՈՒԹԻՒՆ ՆԻԿՈԼԱԿԱՆ[1])

. . . . . ցաք,
Ներհակ ւանմիաբան կացաք.
Նենգիւ զմիմեանըս մատնեցաք,
Եղբայր զեղբայրըս խաբեցաք։
Քանի բանիկ մի այլ ասեմ
Վասըն Հայոցն՝ որք ի Լոմն են.
Չի հպարտ և անձնահաճ են.
Չի բնական Անեցիք են։
Իսկ քահանայք որք ի Նմա կան՝
Գոռոզ յանդուգն ամբարտաւան.
Ոչ ումիք են Նոքա հաւան.
Չտեսի յայլ տեղ սոցա նըման։
Չգիտեն բընաւ սահման ուսման,
Եւ չգիտեն զլեզուս Հայկեան.
Եւ զինչ կարդան՝ չիհասկանան.
Եւ գիտողաց վրայ խրոխտանան[2]։
Փարիսեցւոց Նըմանեցան
Եւ չար դըպրաց Հրէիցըն այն,
Որք Քրիստոսի ընդդէմ դարձան
Եւ զնա ինքեանց մեծ չընկալան։

Այսքան չարեացս պատճառ եղան
Անմիաբան Հայք որք ի Լոմ կան.
Ինատ[3] արին, յանդըգնեցան
Զգեցին ըզմեզ ամենի?[4] բերան։
Չի այսքան հարիւր ամք են [են.
Որ ազգս Հայոց ի Լեհ բնակեալ
Այսպէս կսկիծ բան տեսել չեն
Որ մեր գլուխս այժմ եկել են։
Այս փորձանացս ո՞րք պատճառ են,
Թէ ոչ՝ քահանայք՝ որք յիմարք են.
Որք զհայ լեզուն բնաւ չգիտեն.
Չեն հասկանալ, ծուռ իմացնեն։
Որպէս ասէ աւետարան.
Թէ կոյր կուրի յորժամ դիպան՝
Երկուքն ի խորխորատ անկան.
Այսօր ի մեզ բանքըս լըցան։
Երկու կենօք եմք մեք զըրկած
Եւ յԱստուծոյ աչաց ելած.
Չի յօրինաց եմք հեռացած
Եւ անհնազանդ պատուիրանաց։

1 · Այսպէս անուանեցինք զգրուածս, որոյ սկիզբն և վերջն այլ պակաս ըլլալով՝ մեր միակ ծանօթ օրինակին մէջ, անծանօթ մնայ բուն վերնագիրն և հեղինակն · որոյ այրած սրտով բսածներն՝ յայտնեն որ ժամանակակից էր · զնոյն յայտնէ և Վարդանայ Ցունանեան անկէ առած վկայութիւնն (տ · էր · 127) · և թուի ի փոքր Հայոց կողմէն գաղթած։ — 2 · Տես յեր · 129 Վարդանայ Ցունանեան քիչ մ'այլայլութեամբ օրինակածը։ — 3 · Ինատ, թուրքարէն յամառութիւն։ — 4 · Թերեւս գրուած էր «ինչ», կամ «մինչ»։